ՎՏԱՆԳՎԱԾ Է ԵՐԿՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

14.01.2022 14:31

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը մասնակցել է հունվարի 13-ին ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպված կլանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման ինստիտուտի արժեզրկման, դատական գործերի «ձեռքով» մակագրման կարգի խախտումների և դրանց վերացման վերաբերյալ օրակարգային հարցերով աշխատանքային քննարկմանը:

Քննարկմանը մասնակցել են նաև Փաստաբանական դպրոցի տնօրեն՝ Արա Ջոհրաբյանը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ՝ Արմինե Ֆանյանը, ԱԺ պատգամավորներ, գործող դատավորներ և իրավական ոլորտի այլ ներկայացուցիչներ:

Քննարկումը վարել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Թագուհի Թովմասյանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահն իր ելույթում ընդգծել է, որ այսօր առկա են դատական իշխանության իրացման հետ կապված խնդիրներ ու քննարկվող գործիքակազմերի և առկա մեխանիզմերի պահպանման դեպքում վտանգված է լինելու երկրի իրավական անվտանգությունը: Նա կևևորել է խնդիրների օր առաջ լուծման անհրաժեշտությունը՝ նշելով, որ ունենալու ենք և արդեն ունենք հազարավոր դատական ակտեր, որոնք կասկածի տակ են դրվում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })